

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՏՐԻ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 5/08

Քաղ. Երևան

27 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Յ.Աղամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. փետրվարի 27-ի նիստում (արձանագրություն №58/4) քննարկեց «Pronova BioPharma AS» (NO) ընկերության (ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է.Նահապետյան) 2007թ. դեկտեմբերի 14-ի բողոքը IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերության «OLECOR» (IR 905127) ապրանքային նշանի գրանցման դեմ:

Բողոքողի փաստարկները հետևյալն են:

Բողոքողը բողոքում նշել է, որ 11.08.2003թ «Pronova BioPharma AS» ընկերությունը գրանցել է «OMACOR» (IR 810946) ապրանքային նշանը, որի գրանցման գործողությունը տարածվել է նաև Հայաստանի Հանրապետությունում: 16.11.2006թ IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերությունը գրանցել է «OLECOR» (IR 905127) ապրանքային նշանի, որի գրանցման գործողությունը նույնպես տարածվել է Հայաստանի Հանրապետությունում: Բողոքողը խնդրել է անվավեր ճանաչել «OLECOR» (IR 905127) ապրանքային նշանի գրանցման գործողությունը ամբողջովին, քանի որ դրա նկատմամբ իրավական պահպանությունը տրամադրվել է, ըստ բողոքողի, «Ապրանքային և սպասարկաման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, այն է՝ որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին:

Քանի որ «OLECOR» և «OMACOR» ապրանքային նշանները շփոթելու աստիճանի իրար նման են, ընդհանուր առմամբ զուգորդվում են իրար հետ, այսինքն սպառողի մոտ առաջացնում են նույն բառի ընկալման զգացողություն, ռնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ դրան մասը համընկնում են: «OLECOR» և «OMACOR» ապրանքային

Նշանները իրարից տարբերվում են ընդամենը երկու տառով, նշանների սկզբնատառը և վերջավորությունը նույնն է: «OLECOR» և «OMACOR» ապրանքային նշանները իրար նման են ձայնային տեսակետից համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ, պարունակվող վանկերի ընդհանուր քանակով, ձայնավորների և բաղաձայնների մոտիկությամբ և շեշտադրությամբ: Գրաֆիկական նմանության տեսակետից այդ երկու նշանների ընդհանուր տեսողական տպավորությամբ, օգտագործված շրիֆտի տեսակով, գրաֆիկական գրելաձևով, երկուսն էլ կատարված են լատինական այբուբենի մեծատառերով:

Բողոքողը բողոքում նշել է, որ «OMACOR» (IR 810946) ապրանքային նշանը գրանցված է «Օմեգա-3 ճարպաթթուների տեսքով դեղագործական պատրաստուքներ» ապրանքների համար, իսկ «OLECOR» (IR 905127) ապրանքային նշանը «ձկան յուղ պարունակող փափուկ ժելային պարկուճներ՝ բժշկության մեջ օգտագործելու համար»: «Ձկան յուղը» պարունակում է Օմեգա-3 ճարպաթթուն: Չայտնի է նաև, որ Օմեգա-3 ճարպաթթուներ պարունակող ձկան յուղի օգտագործումը բարեկարգում է մարդու իմունային համակարգը և արտաանոթային համակարգը, կրճատում է խոլեստերինի մակարդակը, կարգավորում է արյան ճնշումը, այսինքն ձուկ կամ ձկան յուղ օգտագործելիս մարդու օրգանիզմը ստանում է հենց այդ Օմեգա-3 ճարպաթթուն: Այսպիսով, երկու ապրանքային նշաններով մակնիշված ապրանքները իրացվում են նեղ մասնագիտաված սպառման շրջաններում, այն է՝ բժշկության ոլորտում, և ծառայում են նույն նպատակին, իրենից ներկայացնում են դեղագործական պատրաստուկներ, որոնք պարունակում են Օմեգա-3 ճարպաթթուն և սպառողը, որը գնում է այդպիսի դեղագործական պատրաստուկ այդ երկու նշանների նմանությունից ելնելով կարող է շփոթել «OLECOR» և «OMACOR» ապրանքային նշանները և դրանց արտադրանքը:

Բողոքողը հայտնել է նաև, որ «Pronova BioPharma AS» ընկերությունը անվանափոխվել և դարձել է «Pronova BioPharma Norge AS», նշելով, որ անվանափոխությունը կատարվում է ՄՄԿ-ի կողմից:

Բողոքարկողի ներկայացուցիչ Է.Նահապետյանը նիստի ժամանակ նշեց, որ IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերությունը պատշաճ ծանուցված է եղել, սակայն նիստին չի ներկայացել և որևէ առարկություն չի ներկայացրել քննարկվող հարցի վերաբերյալ, ուստի, ըստ իրեն, ընկերությունը ընդունել է իր պահանջը: Բողոքարկողի ներկայացուցիչը ընդունել է նաև, որ միայն «COR» վերջավորությունը չէ, որ շփոթելու աստիճան նմանություն է առաջացնում, այլև ապրանքային նշանների սկզբնատառերը՝ «OLECOR» և «OMACOR», նույն են և շեշտադրումը ընկնում է հենց այդ տառերի վրա, և ասոցիցվում է իրար հետ և կարող են շփոթել:

Ինչ վերաբերում է լուրջ հետևանքների մասին, ապա նշեց, որ խոսքը վերաբերում է իր վստահորդի ֆինանսական շահերին, քանի որ «OLECOR» և «OMACOR» ապրանքային նշանների առկայությունը և այն, որ այդ ապրանքային նշաններով մակնշվում են նույն հումքով արտադրված արտադրանք, ապա սպառողը կգնի ոչ թե իր վստահորդի արտադրանքը, այլ IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերության արտադրանքը, որը իր վստահորդին ֆինանսական վնասներ

կհասցևի, այսինքն չի վաճառվի իր արտադրանքը, այլ կվաճառվի IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերության արտադրանքը, ավելացնելով, որ IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերությունը աշխատել է նմանեցնել իր ապրանքային նշանը «Pronova BioPharma AS» ընկերության ապրանքային նշանին:

Բողոքողը խնդրել է ամբողջովին անվավեր ճանաչել IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերության «OLECOR» (IR 905127) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 18.12.07թ. հետձանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է «OLECOR» (IR 905127) ապրանքային նշանի սեփականատեր IBSA Institut Biochimique S.A. (CH) ընկերությանը (Via al Ponte 13, CH-6900 Massagno (CH)) և նրա ներկայացուցիչ՝ N&G Patent Services S.A. (Via Besso 9, CH-6900 Lugano (CH)) բողոքարկման խորհրդի կողմից 2007թ. դեկտեմբերի 14-ի «Pronova BioPharma AS» ընկերության ներկայացված բողոքը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. փետրվարի 27), ՀՀ արտոնագրային հավատարմատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին: Համապատասխան փոստային ծանուցագրի համաձայն սեփականատիրոջ ներկայացուցիչ՝ N&G Patent Services S.A. (Via Besso 9, CH-6900 Lugano (CH)) ընկերությունը ծանուցագիրը ստացել է 27.12.2007թ: Սակայն բողոքարկման խորհրդի 2008թ. փետրվարի 27-ի նիստին ոչ սեփականատերը, ոչ նրա ներկայացուցիչը չեն ներկայացել, ինչպես նաև բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից չի ստացել:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ ելույթի քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ՝

բողոքարկողի փաստարկները հիմնավոր չեն հետևյալ պատճառներով, նախ որպես կանոն բառերի վերջնամասերը ավելի թույլ են ընկալման համար, քան բառերի սկզբնամասերը, տվյալ դեպքում ապրանքային նշանների սկզբնամասերը չեն համընկնում «OLE» և «OMA», ընդհանուրը միայն այն է, որ երկուսն էլ սկսվում են «O» տառով, հատկանշական է նաև, որ կառճ բառերը ավելի հեշտ են տարբերվում իրարից, քան երկար բառերը և երկար բառի պարագայում, եթե սկզբնական որոշ մասը համընկնել, ապա սպառողը, որպես կանոն, վերջնամասը չի նայում և կշփոտեր այն, տվյալ դեպքում խոսքը կարճ բառի մասին է և սկզբնամասը բացարձակապես չի համընկնում և տարբերակիչ հատկություն է տալիս բառերին: Տվյալ դեպքի առանձնահատկությունն է նաև այն, որ «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ նաև կարգ) 101-րդ կետի համաձայն եթե նշանը գրանցման է

ներկայցվում այնպիսի ապրանքների համար, որոնք իրացվում են միայն հատուկ սպառման շրջաններում, մասնավորապես, հատուկ մասնագետների օգնությամբ կամ միայն մասնագիտացված կազմակերպություններին, օրինակ, բժիշկի դեղատոմսով, դեղատան մասնագետների կողմից, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալ պարագայում «շփոթելու աստիճան նմանությունը» տարածվում է և կիրառվում է հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ, այլ ոչ թե բոլոր սպառողների, տվյալ դեպքում արտադրանքը սպառվում է հենց դեղատների կողմից, այսինքն մասնագետները գիտեն, ինչ են վաճառում, ինչի համար է նախատեսված այն և այլն, տվյալ դեպքում մասնագետը չի շփոթի «OLECOR» և «OMACOR» ապրանքային նշաններով մակնշված արտադրանքներ, և ապրանքային նշանները ընդհանուր առմամբ չեն զուգորդվում և տվյալ մասնագետների համար «OLECOR» բառը չի առաջացնի «OMACOR» բառի ընկալման զգացողություն: Ինչպես նաև դեղատան այցելուները դեղերը ձեռք են բերում հենց այդ մասնագետների միջոցով, այսինքն հարցնելով կամ դեղատոմսի միջոցով և տվյալ դեպքում ևս սպառողը չի շփոթի «OLECOR» և «OMACOR» ապրանքային նշաններով մակնշված արտադրանքները: Ելնելով վերոգրյալից բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «OLECOR» և «OMACOR» ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չեն:

Ինչ վերաբերում է նույն հումքից պատրաստված արտադրանքի հարցին, ապա «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում խոսքը գնում է միայն նույն կամ նույնատիպ նշանների ապրանքների մասին, և այս պարագայում նույն հումքից պատրաստված լինելը որևէ նշանակություն չունի գործի քննարկման համար:

Նշենք նաև, որ սեփականատիրոջ կողմից նիստին չներկայանալը և որևէ առարկություն չներկայացնելը քննարկվող հարցի վերաբերյալ, ըստ բողոքարկողի կողմից այն որպես սեփականատիրոջ կողմից իր պահանջը ընդունել դիտարկելու պնդմանը, ապա «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 52-րդ կետի 1-ին մասի համաձայն խորհրդի նիստին չներկայանալը չի խոչընդոտում բողոքի քննարկումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ նաև կարգ) 96, 97, 98, 99 և 101-րդ կետի 2-րդ պարբերությունով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 52-րդ կետի 1-ին մասով և 74-րդ կետի «բ» ենթակետով, Բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Pronova BioPharma AS» ընկերության 2007թ. դեկտեմբերի 14-ի բողոքը և «OLECOR» IR 905127 ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան